

2022թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ ՄՐՑՈՒՅԹԻ 13-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ

ԸՆՏՐԱԿԱՆ IV ՓՈՒԼ (ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼ)

2022թ. ՀՀ լավագույն հաշվապահ՝ անվանակարգում հայտարարված մրցույթի 13-րդ պարբերաշրջանի ընտրական 4-րդ փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են մեկական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 10 միավոր:

Խնդրի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 20 միավոր:

Չորրորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Չորրորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2022թ. դեկտեմբերի 26-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեգր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2023 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

՝2022թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ՝ՄՐՑՈՒՅԹԻ

13-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ IV ՓՈՒԼԻ

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր Ը Ե Վ Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր Ը

(ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼ)

Հարց 1. SS ոլորտի հավաստագրված ԱԶ-ի իրացման շրջանառությունը կազմում է 10 000 000 ՀՀ դրամ, որքան կուտակային վճար պետք է վճարվի՞

Ա. 0

Բ. 700 000

Գ. 60 000

Հարց 2. ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը ՀՀ ոչ ռեզիդենտ, ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող կազմակերպությունից ՀՀ տարածքում գնում է ապրանքներ 10 000 000 ՀՀ դրամ արժեքով, որի մասով անմիջապես կատարում է վճարում: Գույքի գնման վերաբերյալ վաճառողը որևէ փաստաթուղթ չի ներկայացնում: Որքա՞ն շահութահարկի վճարման պարտավորություն է առաջանում ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների մասով՞

Ա. 0,

Բ. 1 000 000

Գ. 2 000 000

Դ. 2 500 000

Հարց 3. Շահութահարկ վճարող կազմակերպությունը անհատույց ստացել է հողամաս

6 000 000

ՀՀ դրամ արժողությամբ: Ե՞տրբ, ի՞նչ եղանակով պետք է ճանաչվի ծախս և եկամուտ:

ՀՕ 109 հոդված 4-րդ մաս

Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ են համարվում նաև՝

....

գ. հողամասերը եկամուտ են համարվում տասը հարկային տարիների ընթացքում, ներառյալ՝ դրանց ստացման հարկային տարին՝ յուրաքանչյուր հարկային տարում հավասարաչափ: Եթե սույն ենթակետով սահմանված ժամանակահատվածում անհատույց ստացված հողամասն օտարվում է, ապա հողամասի արժեքի՝ դեռևս եկամուտ չհամարված մասը եկամուտ է համարվում հողամասի օտարման հարկային տարում,

ՀՕ 121 հոդված 1-ին մաս հողամասերի մասով մաշվածության գծով ծախս չի ճանաչվում,

Իրացման դեպքում ծախս ճանաչվում է ընդհանուր սահմանված կարգով (հիմք 110 հոդված):

Հարց 4. Պաշարների ինքնարժեքի՞ մինչև իրացման գուտ արժեք դուրս գրումը ճանաչվում է որպես

ա. սվյալ ժամանակաշրջանի ծախս.

բ. պաշարների իրացումից հասույթի ճշգրտում.

գ. հետաձգված ծախս՞ ճանաչվելով որպես ծախս այդ պաշարների իրացման ժամանակաշրջանում.

դ. գումարվում է պաշարների ինքնարժեքին:

Հարց 5. Հաշվետու ժամանակաշրջանի արդյուն-քերներով շահութահարկի գծով ճանաչման ենթակա ծախսը (եկամուտը) հավասար է (եթե անտեսենք սեփա-կան կապիտալում ճանաչված, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերումից առա-ջացող գումարները)՞

ա. այդ ժամանակաշրջանի արդյունքներով բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարին.

բ. բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարին՞ ճշգրտած հետաձգված հարկային պար-տավորությունների և հետաձգված հարկային ակտիվների մնացորդներով հաշվետու ժամա-նա-կա--շրջանի վերջի դրությամբ.

գ. բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարին՞ ճշգրտած հետաձգված հարկային պար-տավորությունների և հետաձգված հարկային ակտիվների մնացորդներով հաշվետու ժամա-նա-կա--շրջանի սկզբի դրությամբ.

դ. բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարին՞ ճշգրտած հետաձգված հարկային պար-տա-վորությունների և հետաձգված հարկային ակտիվների մնացորդների փոփոխու-թյուններով:

Հարց 6. Նշված ակտիվներից ուրիշ չի համարվի հիմնական միջոց՞

ա. վարչական նպատակներով օգտագործվող շենքը.

բ. արտադրական նպատակներով օգտագործվող սարքավորումը.

գ. ժամանակավորապես շահագործումից հանված սարքավորումը.

դ. շուկայական գնի աճի ակնկալիքով պահվող շենքը:

Հարց 7. Եթեք է հնարավոր ար-ժա-նահավատորեն գնահատել շահույթի բաշխման պլանների համաձայն պարտականության գումարը՞

ա. պլանի ֆորմալ պայմանները պարունակում են հատուցման գումարի որոշման բանաձևը.

բ. կազմակերպությունը որոշում է վճարվելիք գումարները մինչև ֆինանսական հաշվետվությունները հրապարակման համար հաստատելը.

գ. անցյալ փորձը տրամադրում է հստակ վկայություն կազմակերպության կառուցողական պարտականության գումարի վերաբերյալ.

դ. շահույթի բաշխման պլանների համաձայն՝ պարտականության գումարը հնարավոր է ար-ժա-նահավատորեն գնահատել, եթե տեղի ունեն կամ՝ ա՛ կամ՝ բ՛ կամ՝ գ՛ կետերի պայմաններից մեկնումեկը:

Հարց 8. Կազմակերպության վարչական նշանակության շենքի կառուցման համար ծախսված նյութերի արտացոլում^ա

ա. Դեբետ 118

Կրեդիտ 211.

բ. Դեբետ 821

Կրեդիտ 211.

գ. Դեբետ 713

Կրեդիտ 211:

Հարց 9. Ոչ նյութական ակտիվների ներստեղծման չկապիտալացվող ծախսումների դուրսգրումը որպես ժամանակաշրջանի ծախս^ա

ա. Դեբետ 714

Կրեդիտ 825.

բ. Դեբետ 714

Կրեդիտ 824 .

գ. Դեբետ 713

Կրեդիտ 824:

Հարց 10. Վաճառքի նպատակով կառուցվող ակտիվի արտադրության ժամա-նակ օգտագործված միջոցների գծով հաշվեգրված փոխառության ծախսումների կապիտալացումը՝

ա. Դեբետ 811

Կրեդիտ 414 .

բ. Դեբետ 414

Կրեդիտ 727.

գ. Դեբետ 727

Կրեդիտ 811:

՝2022թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ՝ ՄՐՑՈՒՅԹԻ

13-ԴԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ IV ՓՈՒԼԻ

ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

(ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼ)

Կազմակերպությունը ստեղծվել է 2022թ. և ստեղծված օրվանից գործունեություն է իրականացրել հարկման ընդհանուր համակարգում: 2022թ. օգոստոս ամսվա ընթացքում կատարել է հետևյալ գործարքները.

1. Իրեն սեփականության իրավունքով պատկանող շինությունը անհատույց տրամադրել է համայնքին, որի շուկայական մոտարկված արժեքը կազմում է 40 000 000 ՀՀ դրամ:
2. Իրեն պատկանող կազմակերպության կանոնադրական կապիտալում կատարել է համալրում 20 000 000 ՀՀ դրամ արժեքով հողամասի ներդրում,
3. Մանրածախ եղանակով կատարել է ապրանքների իրացում 36 000 000 ՀՀ դրամ արժեքով (ներառյալ ԱԱՀ),
4. ՀՀ կառավարության որոշման հիման վրա կատարել է ապրանքների մատակարարում 5 000 000 ՀՀ դրամ շուկայական արժեքով, որի 50 տոկոսը անհատույց, մնացած մասը՝ 1 000 000 ՀՀ դրամ արժեքով,
5. Կատարել է բժշկական սարքավորումների իրացում մանրածախ եղանակով 6 000 000 ՀՀ դրամ արժեքով (ներառյալ ԱԱՀ), 1 000 000 դրամ ԱԱՀ-ն արտացոլվել է ՀԴՄ կտրոններով:
6. Կատարել է ապրանքների ներմուծում 72 000 000 ՀՀ դրամ արժեքով, որոնց ԱՏԳ ԱԱ ծածկագիրը 8418 30 200 1 է,
7. Գնել է հողամաս 60 000 000 ՀՀ դրամով (ներառյալ ԱԱՀ), որի շուկայական մոտարկված արժեքը կազմել է 120 000 000 ՀՀ դրամ,

Որոշել 2022թ. օգոստոս ամսվա վճարման/հաշվանցման ենթակա ԱԱՀ-ն:

ԽՆԴԻՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ

1. ԿՏ – 0

2. ԿՏ – $20\,000\,000 * 0,20 = 4\,000\,000$

3. ԿՏ- $36\,000\,000 * 0,167 = 6\,000\,000$

4. ԿՏ- $1\,000\,000 * 0,20 = 200\,000$

5. ԿՏ- 0

6. ԿՏ- $72\,000\,000 * 0,20 = 14\,400\,000$

ԴՏ- $72\,000\,000 * 0,20 = 14\,400\,000$

7. ԴՏ- $60\,000\,000 * 0,20 = 10\,000\,000$

Վճարման ենթակա ԱԱՀ 600 000